

# ԳՐԱԲԱՐԻ ՁՈՒԳԱԲԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

## Գ. Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Արժույթը՝ որպես քերականական իրողություն, հայագիտության մեջ ուշադրության է արժանացել մեր դարի 60-ական թվականներին<sup>1</sup>: 70-ականներին ուսումնասիրվել է ժամանակակից հայերենի համադրական բայերի արժույթը<sup>2</sup>: Ինչ վերաբերում է գրաբարի բայի (այդ թվում նաև վերլուծական բայերի) արժույթին, ապա այն առ այսօր ուսումնասիրության նյութ չի դարձել:

Ներկա աշխատանքում նպատակ ենք հետապնդում քննության առնել գրաբարի զուգաբայական հարադրությունների արժույթային դրսևորումները՝ ենթակատարությունը, ստորոգառությունը, խնդրառությունը և պարագատարությունը<sup>3</sup>:

Ինչպես արդի հայերենում, գրաբարում ևս զուգաբայական հարադրությունները ձևավորվում են երկու (հազվադեպ՝ երեք կամ չորս) բայական բաղադրիչներով: Տարբերությունն այն է, որ գրաբարի զուգաբայական հարադրությունների արտահայտության միջոցներն ավելի բազմազան էին, քան են արդի հայերենում: Գրաբարում առանձնանում են զուգաբայերի հետևյալ տեսակները<sup>4</sup>.

1. բաղադրիչներն արտահայտված են տարբեր բայերի միևնույն անդեմ կամ դիմավոր բայածներով, ինչպես՝ *գալ օգնել* (Ղուկ., Ե, 7)<sup>5</sup>, *կալեալ կապեալ* (Բուգ., 45), *գալ ունի* (Խոր., 103) և այլն,

2. առաջին բաղադրիչն անպայման արտահայտված է հրամայական եղանակի որևէ բայածևով, իսկ երկրորդը՝ մի դիմավոր բայով, որի՝ հրամայական եղանակի բայածև լինելը պարտադիր չէ, ինչպես՝ *Թող հանից* գշխդ յականէ (Ղուկ., 2, 42): *Եկ հասանեալց* բանից աչազեղդ դստերս Ալանաց (Խոր., 178): *Արիք կանք յաղօքս* (Բուգ., 226) և այլն,

3. առաջին բաղադրիչն արտահայտվում է անցյալ դերբայով, իսկ երկրորդը՝ վերջինիս հետ իմաստային առնչություն ունեցող որևէ բայի անդեմ կամ դիմավոր ձևով, ինչպես՝ *սկսեալ խօսել* (Բուգ., 33), *խաղացեալ գայ* (Փարպ., 128), *ընդգրկեալ բերէին* (Ազաթ., 317) և այլն,

4. երկու բաղադրիչներն էլ արտահայտվում են միևնույն բայի անդեմ և դիմավոր ձևերի զուգադրումով, ինչպես՝ *գրել գրեցալ* (Բուգ., 5), *կրթալով կրթալք* (Ա. Թազ., Գ, 21), *կրթեալ կրթիցէ* (Բ. Մակ., Դ, 19) և այլն:

Կախված տվյալ բարդությունը կազմող բայերի բառիմաստի և սեռի քերականական կարգի առանձնահատկություններից՝ գրաբարի զուգաբայական հարադրությունները հանդես են բերում արժույթային անմիօրինակություն:

Չուգաբայական հարադրությունների բոլոր դիմավոր ձևերը խոսքի մեջ անխտիր կատարում են ստորոգյալի շարահյուսական գործառույթ: Օրինակ՝ *Գայր մարանէր* ի խորանն արքունի մեծաւ շքեղութեանք (Փարպ., 82): *Եկեալ յանդիման էղև* թագաւորին Խոսրովու յՈւտի գաւառի՝ Խաղիսաղ քաղաքի՝ ի ձմերոցս արքայութեան Հայոց (Ազաթ., 21) և այլն: Ավաճեն ինքնին նշանակում է, որ ենթակատարության արժույթով այժի են ընկնում բոլոր զուգաբայական հարադրու-

<sup>1</sup> Տե՛ս Յ.Ք.Առլան, Предмет и основные понятия структурального синтаксиса, Ереван, 1968, էջ 67-77:

<sup>2</sup> Տե՛ս Գ.Բ.Տառուկյան, ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 466-488:

<sup>3</sup> Չուգաբայերի կոչականառությունն առանձին քննության նյութ չենք դարձրել, քանի որ այն հատուկ է միայն անձնանիչ ենթակա պահանջող բայերի երկրորդ դիմային ձևերին:

<sup>4</sup> Չուգաբայական հարադրություններն ըստ տեսակների դասակարգել են նաև Ա.Այուղնյանը, Վրթ.Չալիխյանը, Ա.Ս.Մարգարյանը և ուրիշներ (այս մասին տե՛ս Ա.Ս.Մարգարյան, Հայերենի հարադրի բայերը, Երևան, 1966, էջ 293-324):

<sup>5</sup> Աստվածաշնչյան այս և հետագա օրինակները քաղված են Կենստիկի 1960թ. հրատարակությունից՝ ընդունված համառոտագրությամբ:

թյունները՝ գոյականով, դերանունով կամ փոխանվանաբար գործածված այլ բառով արտահայտված ենթակայի հետ կապակցվելով դեմքի և թվի քերականական կարգերի համաձայնության եղանակով՝: Օրինակ՝ Իսկ ի յատոր ուրբաթու մեծի տօսին Պենդէկոստէին *դիմնայ հասանէին* մերձ ի նոյն տեղիս *գօրքն* Հայոց (Փարպ., 69): *Այսպիսին* ընդ մահապարտս համարեալ լիցի և ի հրապարակ արքունի *եկնայ մնոցի* (Ագաթ., 77) և այլն:

Նշենք, որ ենթական կազմությանը կարող է լինել ոչ միայն պարզ, այլև բաղադրյալ, ինչպես՝ Եւ *ինքն իսկ թագաւորն խաղայր զնայր* ի ծնէրոց յԱյրարատ գաւառ (Ագաթ., 71): Յօժարեցան *ռմանք ի ժողովրդենէ* անտի *երբայ յանդիման լինել* թագաւորին (Ա Մակ., Ա, 14): Քանզի իբրև *եկին հասին հրամանք հրովարդակացն* ի մեծ թագաւորէն (Ագաթ., 90):

Գերբայական դարձվածների (կամ, ինչպես դրանք անվանում է լեզվաբան Է.Ս.Սկրտչյանը, դերբայական նախադասությունների) կազմում առկա զուգաբայական հարադրությունները հնարավորություն ունեն կապակցվելու սեռական և տրական հոլովներով արտահայտված փոխակերպված (կողմնակի) ենթակաների հետ, ինչպես՝ *Եկնայ հասնայ Պոնպէի* Հռովմայեցոց զօրավարին յԵրուսաղէմ՝ պաշարէր և ի սրբութիւնս մտանել ժտէր (Ես., Բ, 250): *Թողույ ի բաց լինել նմա* յերկրպագութենէն Քրիստոսի (Ագաթ., 25-26) և այլն:

Տրականով արտահայտված փոխակերպված ենթակա են պահանջում նաև բայական միադիմի միակազմ նախադասությունների մեջ գործածված զուգաբայերը: Օրինակ՝ *Դէպ եղև նոցա գալ մկրանել* ի նեղագոյ տեղի մի (Ագաթ., 27) և այլն:

Չուգադրյալ կամ հարադրության արտահայտված ստորոգյալը ենթակա չի առնում այն դեպքում, եթե այն ենթակայի կամ նախադասության այլ անդամի տեսքով նախապես տեղ է գտել տվյալ կառույցին նախորդած այլ նախադասության արտահայտության պլանում, ինչպես՝ Բայց զի դու չես յաշխարհես յայսմանէ, ... *երբ զնա յերկիրն Ենեաց* (Բուզ., 203): Իբրև տեսն թագաւորն զայրն, զի *դիմնայ եկնայ էր ստ նա* ամենայն ընտանեօքն հանդերձ (Ագաթ., 21) և այլն:

Չուգաբայական հարադրությունները ենթակառու չեն միայն այն դեպքում, երբ կիրառվում են բայական դիմակոր միակազմ նախադասությունների մեջ, ինչպես՝ Եւ յարևմուտս կոյս յուղարկել ի լեառոն, որ *անուանեալ կարդային Գիւցընկէց* (Խոր., 24): Ապա թափէր Վասակ զգերութիւնս ամենայն զՀայաստան աշխարհին և զուսկերս թագաւորացն Հայոց, զորս թափեաց Վասակ, *հանեալ թաղեցին յանուր ի գեղն*, որ Աղծքն անուանին (Բուզ., 122): Նկատենք, սակայն, որ նշված տեսակի միակազմ նախադասությունների զուգաբայական հարադրություններով արտահայտված ստորոգյալները ենթակառությանը արժութագուրկ են ոչ թե ընդհանրապես, այլ միայն տվյալ կիրառության մեջ. նրանք այլ նախադասությունների մեջ կարող են ունենալ ենթակա: Օր.՝ Ամենայն *մարդիկ* երկրին Հայոց *անուանեալ կոչէին* սմա վարդապետ (Բուզ., 230):

Հայտնի է, որ ստորոգառական արժույթը հատուկ է բայի դիմակոր ձևերին, քանի որ ստորոգառման քերականական ակտ կարող է տեղի ունենալ միայն այս կամ այն ժամանակահատվածում: Ավաճան, անշուշտ, չի նշանակում, թե բոլոր բայերի դիմակոր ձևերը ստորոգառու են:

Գրաբարի զուգաբայական հարադրություններից ստորոգառությանը օժտված են ընդամենը մեկ-երկուսը (*անուանեալ կոչել, կալ մնալ* և այլն): Օրինակ՝ Եւ զտեալ զայր մի թարգման վրացերէն լեզուին, որ *անուանեալ կոչէր Քաղայ* (Կորիւն, 62): Նմանեալ Որդոյն Աստուծոյ՝ *կալ մնայ քահանայ* մշտնջենատոր (Երբ., Է, 3) և այլն: Ընդ որում, ստորոգառությունն այդ բայերի ոչ թե բուն առանձնահատկությունն է, այլ օժանդակ հնարավորություններից մեկը: Նշված բայերն առաջին հերթին կարող են հանդես գալ նաև պարզ ստորոգյալի շարահյուսական գործառույթով:

Կախված սեռի քերականական կարգից՝ տարբեր սեռի զուգաբայական հարադրությունները հանդես են բերում խնդրառական արժույթի տարբեր հնարավորություններ:

Ներգործական սեռի զուգաբայական հարադրությունները ձևավորվում են երկու ճանապարհով՝

1. *ներգործական սեռի երկու (կամ ավելի) բայերի զուգադրումով*, ինչպես՝ *Ստեալ ի զօրձարկանէր* զքշուառացոցիչ գաւազանն (Կորիւն, 68): Եւ *յարուցանէր կանգնէր* զհայրն իւր (Տուբ., ԺԱ, 9) և այլն,

2. *չեզոք և ներգործական սեռի բայերի զուգադրումով*, ինչպես՝ Իսկ նա *ընթացեալ ժողովէր* զմարմինս նոցա (Ագաթ., 117): Արձակեաց զնա մի յիշխանաց իւրոց՝ *երբայ չերբակալ առնէլ* զնա (Ա Մակ., ԺԴ, 2):

\* Գրաբար աղբյուրներում առկա են նաև րակառույթային բազմաթիվ փաստեր, որոնք գրաբարի համար օրինաչափ են, ինչպես՝ Սակայն առաւել ստիպով եկեալ հասանէին զուղմ Պարսից ի զաւսոն Արտազ (Փարպ., 69):

Անկախ այն հանգամանքից, թե ներգործական սեռի զուգաբայական հարադրություններն արծույթի ուրիշ ինչ դրսևորումներ ունեն, դրանք պարտադիր կերպով պահանջում կամ ենթադրում են մի սեռի խնդիր, որը կարող է արտահայտված լինել՝

ա) *հայցական հոլովաչեով*<sup>7</sup>, որը, փաստորեն, գրաբարի սեռի խնդրի արտահայտության բուն միջոցն է, ինչպես՝ Որ *եկեալ միարանեաց զգօրսն* Պարսից (Ագաթ., 15): Որ եկեալ պատեալ *պաշարեալ պահէին* գտուրք *բաղաքն* (Բ Մակ., Ա, 12) և այլն:

բ) «*Հայցական հոլովաչե-սեռականով հավելադրություն*» մասնակաղապարով լեզվին բերին *կարս պարանաց* երկայն և ստուար (Ագաթ., 115):

գ) «*Բացառական հոլովաչե-հայցական հոլովաչե*» մասնակաղապարով, ինչպես՝ *Եւ զայլսն ի անցանէ* դաշտացն և անտառախիտ մայրեացն ցրուեալս վատնէին (Փարպ., 66): Արդ եկայք առաքեսցուք *ի մէնք երկուս* (Բուգ., 86) և այլն:

դ) *Բացառական հոլովաչեով*, որն այլ կերպ կոչվում է մասնական ուղիղ խնդիր, ինչպես՝ Գտեալ անդ զօրականս պարսիկս բազում, *յորոց* սուր ի վերայ եղեալ կոտորէին (Փարպ., 66): Յատուր ժամանակացն այնոցիկ ելին տարան *յորոցն* Իսրայելի արք անօրէնք (Ա Մակ., Ա, 12):

ե) *Որոշ բայերի հետ*՝ «*Զ-բացառական հոլովաչե*» մասնակաղապարով, որը նույնպես մասնական ուղիղ խնդրի արտահայտչամիջոց է, ինչպես՝ *Եւ մատուցեալ թագաւորն և նախարարքն բունս հարեալ ունէին զորից* սրբոյն Գրիգորի (Ագաթ., 116):

զ) *Երկրորդական նախադասությամբ*, ինչպես՝ *Եւ հայեցեալ տեսանէր Վարդան հանդերձ ընկերակցօքն իրովք, զի արարեալ փախապահական և անցաւ* (Փարպ., 66): Բայց ըստ ծանր խտիակամութեանն իրոց հայեցեալ նկատուր, *թէ ... շիասանեալ ասպարանքի իշխանն Միւնեաց Վասակ* (Փարպ., 60):

է) *Մի պարզ կամ բարդ նախադասությամբ, որ սովորաբար հանդես է զայլս որպես ուղղակի խոսք*: Օրինակ՝ *Եւ եմտտ պատմեաց հօրն. «Միասակի զգի ընկեղ, որ զա ընդ իս»* (Տոլբ., Ե, 10):

Ըստ խնդրառական արծույթի՝ ներգործական սեռի զուգաբայական հարադրությունները բաժանվում են երկու խմբի՝ *միարժույթ* և *երկարժույթ*:

1. *Միարժույթ* են դիտվում այն ներգործական սեռի զուգաբայական հարադրությունները, որոնք հնարավորություն ունեն պարտադիր պահանջելու միայն մեկ (ընդ որում, սեռի) խնդիր: Գրաբարի միարժույթ ներգործական սեռի զուգադրական բայերից են՝ *ելանի ծածկել, հայեցեալ տեսանի, երթալ լրտեսել, զալ հարկանի, հարկանի վանել, ելանի տեսել, հարկանելով հարկանել, ելանի խնդրել, երթալ չեղբակալ առնել, յարուցանի կանգնել* և այլն: Օրինակ՝ *Զնորոգումն* յարութեան յանձին *բարչեալ թեթ* (Ագաթ., 53): Եւ ելին *յցին ծածկեցին* զամենայն *երկիրն* Հայոց (Բուգ., 14): *Հայեցեալ տեսանէին զգունդսն* Պարսից (Փարպ., 65) և այլն:

2. *Երկարժույթ* են դիտվում այն ներգործական սեռի զուգաբայական հարադրությունները, որոնք կարող են առնել երկու խնդիր. ընդ որում, այդ խնդիրներից մեկը պահանջվում է տվյալ զուգաբայերի սեռի քերականական կարգի գործությամբ, իսկ մյուսը, որպես կանոն, մի բնության խընդիր է, որը պահանջվում է՝ պայմանավորված տվյալ զուգադրական բարդության բայիմաստով: Օրինակ՝ «*Մինչ զի եւ զկանայս անգամ յարանց կենդանոյն մեկնեալ հեռացուցանեն*» (Ագաթ., 87) նախադասության *զկանայս* խնդիրը պահանջվում է բայստորոգայի սեռի քերականական կարգով, իսկ *յարանց*-ի առկայությունը տվյալ բայիմաստով է պայմանավորված:

Գրաբար աղբյուրներում երկարժույթ ներգործական սեռի զուգաբայական հարադրությունները հաճախակի կիրառություն չունեն՝:

Երկարժույթ զուգաբայական հարադրությունները, սեռի խնդրից բացի, պահանջում են նաև մի բնության խնդիր՝ արտահայտված՝

ա) *տրական հոլովով*, որ պահանջում են՝ *զրիչ ցուցանի, զալ ուսուցանի, կալ պարանի, յանցն առնել նուիրել* և այլն: Օրինակ՝ *Գրեալ եցոյց* նոցա Վասակ զիտր խաբէութեանն կանս (Փարպ., 64): Նա *եկեալ ուսուցէ* ձեզ դեղ ցավոցը բժշկութեան (Ագաթ., 114) և այլն:

բ) *բացառական հոլովով*, որ պահանջում են՝ *պրծեալ ասրեցուցանի, մեկնեալ հեռացու-*

<sup>7</sup> Նախադասության բովանդակության պլանում ենթադրվելու դեպքում սեռի խնդիրը կարող է նաև բառային արտահայտություն չունենալ: Օրինակ՝ *Եւ... Վահանաւորքն... կային պահէին* (զԳարեգին-Գ.Խ.) ըստ հրամանի տուելոյն (Բուգ., 205): Ուռածը ջարդեալ զբեռս երկաթոյն, դնելով ի վերայ սաւիցն բեկեալ հանցեն ի քաց (Փարպ., 92) և այլն:

<sup>8</sup> Մի սեռի և մի բարդության խնդիր ունեցող ոչ բոլոր զուգաբայական հարադրություններն են խնդրառության երկարժույթ: Այս պարագայում կարևորվում է պահանջված բնության խնդրի պարտադիր լինելը: Օրինակ՝ *Ընդ որս կալեալ տանէին* և գտուրք եպիսկոպոսն (Փարպ., 75) նախադասության ընդգծված զուգաբայը երկարժույթ չէ, քանի որ *ընդ որս* բնության խնդիրը տվյալ զուգաբայի համար պարտադիր չէ. չի բխում այդ բայի իմաստային դաշտից:

*ցանել, մեկնել հանել, հանել մերժել* և այլն: Օրինակ՝ Եվ զամենայն եպիսկոպոս *մեկնեաց Ե-հան* յիրաբանչիւր *ժողովրդոց* (Բուգ., 77): Անդ ոմն *արծեայ սարեցոցսանէր* ի հինէ անտի *յոդո-տոցն* Խորտովու թագաւորին Հայոց մանկիկ մի փոքրիկ (Ագաթ., 23-24):

զ) *Գործիական հոլովով*, ինչպես՝ *Հանդերձեցին լցին համբարօք* գրեթէ (Ա Մակ., Ա, 36):

դ) *Կապական կապակցութեամբ*, ինչպես՝ *Հասարակելով հասարակեաց* զմեզ *ընդ խր* ի բա-րեկանս և ի թիկունս (Ա Մակ., ԺԴ, 26): Եւ զտղայս պահպանեալ սնուցանէ և ի տեղիս իրաբան-չիւր և *յիշխանութիւն ածեալ հասուցանէ* (Փարս., 67):

Ենթադրվող բնության խնդիրները ոճական կամ այլ նկատառումով միշտ չէ, որ տեղ են գտ-նում նախադասությունների արտահայտության պլանում, ինչպես՝ *Եւ կաց պարունաց զերեկո-րին զգործս բարոքեանս նորս* (Ագաթ., 28): *Իսկ նա հանեալ մարտոցսանէր զլեզուն* (Ագաթ., 106): *Եւ ելին լցին ծածկեցին զամենայն երկիրն Հայոց* (Բուգ., 14) և այլն: Նշված հանգա-մանքն արժույթի գնահատման հարցում էական չէ:

Գրաբարում չեզոք սեռի զուգարայական հարադրություններ առաջանում են «*չեզոք սեռի բայ-չեզոք սեռի բայ*» մասնակադապարով, որը գրաբարում զուգարայական հարադրություն-ների արտահայտության առավել տարածված միջոցներից է: Կարծում ենք՝ նշված փաստի պատճառն այն է, որ զուգարայական հարադրությունների մեջ ակնհայտ է չեզոք սեռի բայերի գործոնը. բանն այն է, որ դրանք մեկ ներգործական սեռի զուգարայերի մի առանձին խմբի կազ-մության պարտադիր բաղադրիչներն են:

Մովորաբար, չեզոք սեռի զուգարայական հարադրություններ են ձևավորվում կամ երկու հո-մանիշ (կամ համանիշ) չեզոք բայերի հարադրությամբ, ինչպես՝ *չու առնել զայ, երթալ զնայ, Ե-կայք երթիցոք, անկանիս կործանիս* և այլն, կամ էլ իրար հարակից երկու տարբեր գործողու-թյուններ անվանող չեզոք սեռի բայերի հարադրությամբ, ինչպես՝ *զայ ի վերայ հասանել, երթալ յանդիման լինիս, խաղալ զնայ, զայ իջանել, զայ մըսանել, զայ բանակել, երթալ ուխտ դնել* և այլն:

Ըստ խնդրատական արժույթի՝ չեզոք սեռի զուգարայական հարադրությունները բաժան-վում են երկու խմբի՝

1. *խնդրատու չեզոք սեռի զուգարայական բայեր,*

2. *խնդրատությամբ արժութագործի չեզոք սեռի զուգարայական բայեր:*

*Խնդրատու չեզոք սեռի զուգարայական հարադրություններ* են դիտվում այնպիսիք, որոնք կարող են առնել որևէ բնության խնդիր: Օրինակ՝ *Ելէք մարտերուք ի վերայ ազգիդ* մերոյ (Ա Մակ., ԺԶ, 3): Յօժարեցին ոմանք ի ժողովոյնէն անտի *երթալ յանդիման լինել թագաւորին* (Ա Մակ., Ա, 14) և այլն:

Գրաբար աղբյուրներում վկայված խնայողառու չեզոք սեռի բայերը գերազանցապես միար-ժույթ են՝. դրանք պարտադիր կերպով պահանջում կամ ենթադրում են իրենց բառիմաստի ա-ռանձնահատկությամբ պայմանավորված խնդիր:

Խնդրատությամբ միարժույթ զուգարայերը իմաստով միատարր չեն, ուստի տարբեր են մեկ ուրանց պահանջած բնության խնդիրները, որոնք արտահայտվում են՝

1. *պրակական հոլովով*, որ պահանջում են՝ *երթալ յանդիման լինիս, զնայ պարսահիս, հոգա-ցեալ ինանս պանիս, ժուժայ փոկայ* և այլն<sup>9</sup>: Բերված բայերի գոնե վերջին բաղադրիչն ինքնին *պրակական հոլովով* արտահայտված խնդրատու բայ է, իսկ առաջինը կամ ընթացք է անվանում, կամ էլ իրեն հաջորդող բայի հոմանիշն է (կամ համանիշը): Օրինակ՝ *Եկեալ յանդիման եղի թա-գաւորին* Խորտովու (Ագաթ., 21): Եւ *երթալ յանդիման լինէր թագաւորին* (Կորին., 62) և այլն:

2. *Բացասական հոլովով*, որ պահանջում են՝ *յեզս կացեալ սպարամբի, թողոյ ի բաց լի-նել* և այլն, ինչպես՝ Եւ յետս կացեալ սպատամբեաց *ի միարանութենէ* ճշմարտութեանն (Փարս., 66-67): Նեղիզ գնա թողոյ ի բաց լինել մնա *յերկրպագութենէն* Քրիստոսի (Ագաթ., 25-26):

3. *Կապական կապակցություններով*, որպիսիք պահանջող բայերն իրարից տարբերվում են ոչ միայն իմաստով, այլև պահանջած բնության խնդրի արտահայտության պլանով: Այս խմբի բայերը գրաբար աղբյուրներում գործածության հաճախակնությունները նկատելիորեն զիջում են նախդրավոր կապակցությամբ արտահայտված պարագա պահանջող զուգարայերին: Օրինակ՝ Դուք մեղմով երթայք և ուշադրեալ հայեցարուք *ի մեզ* (Փարս., 129): Չի եկեսցէ տացէ մարտ պա-տերազմի *ընդ Տրիփոնայ* (Ա Մակ., ԺԴ, 1) և այլն:

<sup>9</sup> Չեզոք սեռի խնդրատությամբ երկարժույթ զուգարայական հարադրությունները գրաբարում հազվագյուտ են, ինչպես՝ Քանգի իրև եկին *հապի*ն հրամանք հրովարտակացն ի մեծ *թագաւորն* Յունաց առ Տրդատ արքայն Գայոց Մեծաց (Ագաթ., 90):

<sup>10</sup> Թեև Որ կայ *պահի* յուսացելոց ջոց (Ագաթ., 60) նախադասության ընդգծված զուգարայը եւ պահանջել է տրականով բնության խնդիր, սակայն վերջինս պարտադիր խնդրատության դրսևորում չէ:

ինչ վերաբերում է *խնդրատրայանք արժուրբագուրի չեզոք սեռի զուգաբայերին*, ապա սրանք գրաբարի լեզվական աղբյուրներում բաժանվում են երկու խմբի՝

1. *զուգաբայեր, որոնք խնդրատու չեն*, ինչպես՝ *ի վեզ եկեալ յամատել, հանդերձեալ կազմիմ, անկանիմ փշրիմ, պնդեալ զօրանալ, ուրախացեալ ցնծալ, եռալ զեռալ, անկեալ սափսկիմ* և այլն: Օր.՝ *Ուրախացեալ ցնծայր* ամենայն խոհարան լտղացն (Փարպ., 90): Մարտիրոսութեան տենչողքն *պնդեալք զօրանային* (Փարպ., 68) և այլն:

2. *զուգաբայեր, որոնք, խնդրատու չլինելով հանդերձ, պարագաատու են* պարտադիր կերպով պահանջում կամ ենթադրում են առնվազն մեկ տեղի պարագա:

Գրաբարի ներգործական և չեզոք սեռի զուգաբայական հարադրությունների մեջ առանձնանում են այնպիսիք, որոնք աչքի են ընկնում պարտադիր պարագաատությամբ: Հարկ է նշել, որ այդ բայերի պահանջած (կամ դրանց բովանդակության պլանում ենթադրվող) պարագաները, իբրև կանոն, արտահայտում են գործողության կատարման տեղի քերականական իմաստ և, կախված բայգերադաս անդամի բաղիմաստային առանձնահատկությունից, կարող են հանդես գալ տարբեր արտահայտության պլաններով և տեղի պարագայի քերականական տարբեր նրբիմաստներով: Այսպես՝ «*Եւ անդէն անկան կործանեցան շուրջ զԱնանիայ փանարան*» (Բ Մակ., Ա, 13) նախադասության զուգաբայի (*անկան կործանեցան*) պահանջով տեղի պարագան (*շուրջ զփանարան*) արտահայտվել է կապական կապակցությամբ և արտահայտում է պարտական իմաստ, իսկ «*խաղաց գնաց նա յերկրէն Քնդիսացոց*» (Ա Մակ., Ա, 1) նախադասության զուգաբայի (*խաղաց գնաց*) պահանջով տեղի պարագան (*յերկրէն*) արտահայտվել է հոլովաձևով և ունի ելման, սկզբնակետի տեղի պարագայի քերականական իմաստ:

Ներգործական և չեզոք սեռի զուգադրական բայերը պարագաատական արժույթի տեսանկյունից հանդես են բերում անմիօրինակություն:

Պարտադիր պարագաատությամբ բնութագրվող ներգործական սեռի զուգաբայական հարադրությունները գրաբարի լեզվական աղբյուրներում մեծ թիվ չեն կազմում: Ընդ որում, պարագաատությունը մի դեպքում պայմանավորված է տվյալ զուգադրական հարադրության բաղադրիչներից միայն մեկով, իսկ մյուս դեպքում՝ բոլոր բաղադրիչներով: Նկատենք նաև, որ զուգադրաբայության բաղադրիչ կազմող բայի սեռի քերականական կարգն այս դեպքում որևէ դեր չի կատարում, քանի որ պարագաատությունը պայմանավորված է բայերի բաղիմաստով:

Գրաբարում պարտադիր պարագաատությամբ աչքի են ընկնում *կալեալ ածել, ածել կացուցանել, առեալ կապել, հանել նսփուցանել, բարչեալ փանիմ, հանեալ կախել, խաղացուցեալ փանել* և այլ ներգործական սեռի զուգադրություններ: Օրինակ՝ *Եւ զասպազէն նորին զիւր զառնազէնն առեալ կապեալ ի քիկունս* (Ագաթ., 109): *Ածիկ կացուցիկ* զնոսա առաջի բազաւորիկն (Փարպ., 82): Վասն այսորիկ *բարչեալ փանիմք* զուկերս քազաւորացն Հայոց *յաշխարհն* մեր (Բուզ., 122) և այլն:

Այս շարքի որոշ ներգործական բարդություններ թեև գործություն ունեն պարտադիր տեղի պարագա պահանջելու, սակայն վերջիններս որոշ կիրառությունների մեջ ոճական կամ այլ նկատառումներով բացակայում են, ինչպես՝ *Եւ կալեալ ածէին* և զԲատն (Բուզ., 205): Մեն մի բռնաքար առ այր հրամայէին, զի *քերցեն ընկեացեն* շեղջ կուտել (Բուզ., 14) և այլն:

Նշված բայերի պարագաատական այլ դրսևորումները արժույթի տեսանկյունից չեն կարևորվում, ինչպես՝ Չոր եղեր պատրաստեցեր *յօր* կատարման խոստմանց քոց (Ագաթ., 54): Յայնմ *ժամանակի* եկեալ գտանէին ի քաղաքին Հռովմայեցոց արգելվաճանս մի կուսանոց (Ագաթ., 78-79):

Չեզոք սեռի զուգաբայական հարադրությունների շարքում առանձնանում են այնպիսիք, որոնք, անկախ այն բանից՝ խնդրատու են, թե ոչ, պարտադիր կերպով պահանջում կամ ենթադրում են տեղի պարագա: Գրաբարի պարագաատու բայերից են՝ *հասեալ զալ, չու առնել զնալ, յարուցեալ զնալ իջանել, զալ հասնել, դիմեալ իջանել, խաղալ զնալ, զալ մտանել, զալ իջանել, զալ մնտանել, երթալ կորնչիմ, երթալ հասանել, դիմեալ հասանել, ելեալ երթալ, հասանել զալ, եկեալ հասանել, զալ ի վերայ հասանել, երթալ շրջել* և այլն:

Նշված բայերն, ըստ պահանջած պարագայի արտահայտության պլանի, բաժանվում են մի քանի խմբի՝ պահանջելով՝

1. *որևէ հոլովայեղով* (տվյալ դեպքում՝ միայն բացառականով) *արտահայտված պարագա*, ինչպես՝ *Լսէին, թե զօր բազում խաղացեալ զայ ի Պարսից* (Փարպ., 128): Յետ այսորիկ խաղաց գնաց Տրիփոն *ի քաղաքէն* Պողոմայեցոց (Ա Մակ., ԺԳ., 12): *Խաղաց գնաց նա յերկրէն* Քետիմացոց (Ա Մակ., Ա, 1) և այլն:

2. **Որե՛է կապական կապակցութեան արտահայտութեամբ պարագագ** Այս խմբի զուգարայերի պահանջած պարագան կարող է արտահայտել՝

ա) «**Ի(յ) նախդիր**-(+) **եզակի բվի Կրական հոլովով կապվող բառացե**» մասնակաղապարով, որպիսիք սովորաբար արտահայտում են բուն կամ դադարման տեղի պարագայի քերականական իմաստ, ինչպես՝ Սուրբ վկայքն այնորիկ եկեալ ղոյեալ էին յարքայական **կայանին** (Ագաթ., 88): **Յորում** Վրթանես երթեալ շրջեր առանձինն սակաւութ (Բուգ., 7): Եկեալ հասաներ ի Հայաստան աշխարհին ի վեցերորդ ամի Վտանշապիոյ արքայի (Կորիւն, 50)17 և այլն:

բ) «**Ի(յ) նախդիր**-(+) **եզակի բվի հայցական հոլովով կապվող բառացե**» մասնակաղապարով: Օրինակ՝ Անդէն ի մնին գիշերի եկին հասին վաղվաղակի **ի Կնդի** անդր իշխանք թագաւորին (Ագաթ., 106): Արդ եկն եհաս Երեմիա մարգարտ **ի Կնդի** անդր (Բ Մակ., Բ, 5): Ե՛րթ գնա՛ **յնրկիրն** ճննաց (Բուգ., 203): Գարծեալ անցեալ եկեալ լինէր **յաշխարհն** իւր (Ագաթ., 16): Երթալ կորնչել յտար **կրկիր** (Փարպ., 83): Եւ ինքն իսկ թագաւորն խաղայր գնայր ի ձմերոց **յկայարատ գաւառ** (Ագաթ., 71): և այլն:

գ) «**Ի(յ) նախդիր**-(+) **հոգնակի բվի հայցական հոլովով կապվող բառացե**» մասնակաղապարով, որպիսիք սովորաբար արտահայտում են կամ բուն (դադարման) տեղի, կամ էլ ուղղութեան տեղի պարագայական իմաստ: Հմտ. Գային հասանէին **ի ժամադիր կողմանս** (Կորիւն, 68) և Գայր մտանէր **ի խորանն** արքունի մեծաւ շքեղութեամբ (Փարպ., 82) և այլն:

Նշված տեղի պարագաները երբեմն հանդես են գալիս իրենց լրացման՝ մասնավորող պարագայական բացահայտչի հետ զուգորդված, ինչպես՝ Եկին իջին **յկայարատ գաւառ ի վաղարշապատ թաղաք** (Ագաթ., 22): Եկեալ յանդիման եղև թագաւորին Խտարովու **յկտի գաւառի ի Խաղիաղ թաղաքի ի ջնկրոցս** արքայութեանն Հայոց (Ագաթ., 21) և այլն:

դ) «**Առաջի նախդիր-սեռական հոլովով կապվող բառացե**» մասնակաղապարով, ինչպես՝ Ամենայն մարդիկն անկեալ թաւալէին **առաջի նորս** (Ագաթ., 126) և այլն:

ե) «**Շուրջ նախդիր**»- **Չ նախդիր + գործիական հոլովով կապվող բառացե**» մասնակաղապարով, որպիսին կարող են պահանջել սահմանափակ թվով զուգարայական հարադրություններ, ինչպես՝ **պարեալ ծովանայ, սփոյն Կարածիւն, խաղալ գնալ սասպարակ սփոյն, ելանի շրջել** և այլն: Օրինակ՝ Չօրածողով լինէր, խաղայր գնայր ասպատակ սփոյն **զկողմանք** Հայաստան աշխարհին (Ագաթ., 24) և այլն:

զ) «**Առ նախդիր-հայցական հոլովով կապվող բառացե**» մասնակաղապարով, որի միջոցով, կախված զուգարայ գերադաս անդամի բառիմաստից, արտահայտվում է, մի դեպքում՝ ուղղութեան, վերջնակետի, մյուս դեպքում՝ բուն, դադարման տեղի պարագայի քերականական իմաստ: Օրինակ՝ Իբրև ետես թագաւորն գայրն, զի դիմեալ եկեալ էր **առ նս** ամենայն ընտանեօրն հանդերձ (Ագաթ., 21): Իջին բանակեցան **առ սփոյն** գետոյն, զոր Գայլն կոչեն (Ագաթ., 30) և այլն:

է) **Այլ մասնակաղապարներով**, որոնցում տեղանիշ կապվող բառածևի պարագայական իմաստի՝ գերադաս անդամի հետ փոխհարաբերությունը կարգավորում են այնպիսի նախդիրներ, ինչպիսիք են՝ **ի մեջ, ի միջի, ի վերայ, զինք, ընդ** և այլն: Օրինակ՝ Իսկ իմ անցեալ, սահեալ շըրջեալ **ի վերայ այնացն** (Ագաթ., 14): Ճեպեալ ընթանային զօրքն Հայոց **զինք երանելոյն** Վարդանայ սպարապետին Հայոց (Փարպ., 68): Երթեալ հասանէր **ի մէջ նոցա** երանելին Արքիանոս (Բուգ., 9): Ի վաղի շուեայր անցանէին **ընդ զինքն** մեծ (Փարպ., 66) և այլն:

Նշված զուգարայական հարադրությունները միշտ չէ, որ աչքի են ընկնում պարագաառութեամբ: Մի շարք կիրառությունների մեջ դրանք ռճական, իմաստային և կամ այլ նկատառումներով զրկվում են պարագա առնելու հնարավորությունից, ինչպես այդ նկատելի է հետևյալ նախադատությունների մեջ՝ **Իսկ իբրև եկին հասին աւարք զերտար հարաստիղը գարուն դրանցն բանայոյ** (Ագաթ., 21): **Չի զինքն Երասխա յարուցեալ գայր լի դարիդարիւ** (Ագաթ., 23): **Եկեալ հասեալ էին ի թիկունս օգնականութեան նիզակակիցք գործոյն պարեւրագին** (Ագաթ., 17) և այլն:

Չեզոք սեռի զուգարայերը պարագաառութեամբ կարող են լինել միարժույթ կամ ետարժույթ: Միարժույթ զուգարայերը սովորաբար պահանջում են բուն տեղի պարագա: Այդ բայերից են՝ **գալ ի ծունր իջանի, անկանիւն բաւայիւն, ելանեն շրջիւն, զաւն ազանիւն, դակիչ ածեալ բանակիւն** և այլն:

Ինչ վերաբերում է ետարժույթ զուգարայերին, ապա սրանց պարագաատական արժույթներից մեկը կամ երկուսը հասկանալի կամ անկարևոր լինելու պատճառով նախադատութեան արտահայտութեան պլանում իրացում չեն գտնում: Սովորաբար հիշատակվում են արժույթներից միայն նրանք, որոնք կարևորվում են խոսքի հեղինակի կողմից: Այդ զուգարայերից են՝ **կրթեալ հասանի, դիմեալ եկեան, խաղալ գնալ, չու առնել գնալ** և այլն: Օրինակ՝ Եկեալ հասեալ են **ի սահմանս** Հերայ (Փարպ., 128): Կամեցեալ շու առնել գնալ **ի դռունն** և ինքն նենգաւոր իշխանն Սիւնեաց (Փարպ., 75): Չայնու ժամանակաւ երթեալ հասանէր եայլսկոպոսապետն Վրթանես ի

մեծն յառաջին *ի մայրն* եկեղեցեացն Հայոց (Բուզ., 7): Խաղաց գնաց թագաւորն *ի կողմանս Հայոց* (Ազաթ., 29) և այլն:

Կատարված ուսումնասիրությունը բերում է մի շարք հետևությունների.

1. եթե զուգաբայ կազմող բաղադրիչները միևնույն սեռի հոմանիշ կամ համանիշ բայեր են, ապա տվյալ բարդության արժույթի դրսևորումները հավասարապես պայմանավորված են այդ բայերից ամեն մեկով, իսկ եթե զուգաբայ են կազմում միևնույն սեռի, բայց ոչ հոմանիշ (կամ համանիշ) բայեր կամ էլ տարբեր սեռերի բայեր, ապա տվյալ բարդության արժույթի դրսևորումները սովորաբար պայմանավորված են շարահասությամբ վերջին բաղադրիչով:

2. եթե ենթակաառությամբ օժտված են բոլոր զուգաբայերը, ապա ստորոգառական արժույթը հատուկ է այդ բայերից ընդամենը մեկ-երկուսին: Վերջին հանգամանքը պայմանավորված է նրանով, որ զուգաբայական հարադրությունները հազվադեպ են կատարում վերացական կամ երանակավորիչ բայի գործառույթ:

3. Խնդրառական արժույթով օժտված են և՛ ներգործական, և՛ չեզոք սեռի զուգաբայական հարադրությունները: Սակայն եթե ներգործական սեռի բոլոր զուգաբայերն են խնդրառու, ապա չեզոք սեռի զուգաբայերի շարքում կան նաև խնդրառությամբ արծիթազուրկ բայեր: Պատճառն այն է, որ չեզոք բայերի խնդրառությունը պայմանավորված է այդ բայերի բառիմաստով, իսկ վերջինս միշտ չէ, որ պարտադիր խնդրառության օժտվածություն ունի:

4. Պարագաառությամբ աչքի են ընկնում հատկապես չեզոք սեռի զուգաբայական հարադրությունները: Ասվածը պատճառաբանվում է նրանով, որ չեզոք սեռի զուգաբայ կազմող բաղադրիչներից գոնե մեկը սովորաբար անվանում է ընթացք, որևէ ուղղությամբ շարժում և օժտված է պարագաառական արժույթով:

### ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ազաթ. - Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տիղիս, 1909:

Բուզ. - Փատառոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, Ս.Պետերբուրգ, 1883:

Եւս. - Եւսեբիոսի Կեսարացոյ Ժամանականք երկմասնեայ, մասն Բ, Ժամանակագրութիւն պատմական, Վենետիկ, 1820:

Խոր. - Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տիղիս, 1913:

Կորիւն - Կորիւն, Վարք Մաշտոցի, Երևան, 1957:

Փարպ. - Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան, Տիղիս, 1904:

**Г.К. ХАЧАТРЯН** – *Валентная классификация древнеармянских двойных глаголов.* – Данная работа посвящена изучению одной из актуальных и неисследованных проблем синтаксической структуры древнеармянского азыка. Результаты изучения свидетельствуют, что: а) все двойные глаголы могут предполагать и требовать подлежащее; б) с обращением, исключительно обозначающим лицо, могут сочтаться только глаголы второго лица; в) крайне редки двойные глаголы, управляющие предикативом; г) все действительные двойные глаголы, управляющие актантами, по меньшей мере одновалентны, а глаголы нейтрального залога по управлению актантами могут быть даже безвалентными, д) управлением сирконстантами отличаются особенно некоторые глаголы нейтрального залога, которые при этом могут проявлять одновалентность или трехвалентность. Однако не все возможные актанты и сирконстанты могут быть реализованы в речи, а только те, которые информативно важны в данной речевой ситуации.